**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ**
**ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**„14„ մարտի 2014թ.** **N 65-Ա**

# ԼՃԱՓ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ԿԱՌԼԵՆ ԱՐՇԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Կառլեն Արշիկի Հովհաննիսյանի հետ 2011 թվականի նոյեմբերի 25-ին կնքված N 277 աշխատանքային պայմանագրի 3.7-րդ կետի պահանջը

***կարգադրում եմ՝***

1. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կառլեն Արշիկի Հովհաննիսյանին ս/թ մարտի 24-ից մինչև ս/թ ապրիլի 4-ը ներառյալ տրամադրել 12 օրացույցային օր տևողությամբ չվճարվող արձակուրդ և աշխատանքի մեջ համարել ս/թ ապրիլի 7-ից:
2. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների և լիազորությունների իրականացումը ս/թ մարտի 24-ից մինչև ս/թ ապրիլի 4-ը ներառյալ հանձնարարել նույն դպրոցի տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Նարինե Սամվելի Պողոսյանին /համաձայնությամբ/:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ